



ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Խրիմյան Հայրիկը հայ ժողովրդի մեծագոյն երախտավորներից մեկն է, որն իր երկարատև կյանքի և բնումնավոր գործունեության ընթացքում թողել է հսկայական գրավոր ժառանգություն՝ հայ մշակույթի տարրեր բնագավառներին առնչվող: Այդ ժառանգության մի կարևոր մասը պետք է անվերադարձ կորած համարել. մի մասը հավանութեան մնացել է օտար երկրների մատենադարաններում, գոյն հայ Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքարանների արխիվներում և այլուր, իսկ մի փոքրիկ հատվածն էլ, հիմնականում համակազությունը, հասել է Եւրոպին և Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, որտեղ գտնվող իր և տարրեր հեղինակների արխիվային ֆոնդերում պահպանվող զանազան նյութերի և համակենական թիվը հասնում է շորջ 600-ի:

Մկրտիչ Խրիմյան Հայրիկի անվան արխիվային ֆոնդը թանգարանում կազմակերպվել է 1931 թ. Էջմիածնի լանջի թանգարանից ստացված մի շարք իրերով (առանձին ցուցանուվ), որոնք տարրեր ժամանակներում և առիթներով Խրիմյան Հայրիկն, որպես հներ, ստացել է իր գործի և անձի երկրպագուներից:

Ստացված իրերից կարելի է հիշատակել կաղնե փայտից քանդակված և արծաթապատ սկիբը, «Արծիվ Վասպորական» փայտյա քանդակը, արորն ու գութանը, սուրբ ու գրիչը, զարդերով պապակյա եղբայրը քաժակները, Պետերբուրգի և Խարկովի

հայ ուսանողության ողարկած ուղերձը, նկարներ և այլ նյութեր:

1943 թ. Թիֆլիսում բնակվող իր եղբար թոռան՝ Թոռնեիկ Խրիմյանից ստացվում է Խրիմյանի համակեները՝ գրած անվանի անգլիացի ճանապարհորդ-գիտնական Հ. Ֆ. Լինչին, Կովկասի փոխարքա Վլորուցով-Դաշկովին, Վ. Հյուգոյի թարգմանիչներից մեջին՝ Վ. Պատկանյանին, Մ. Թերլեմեզյանին, Փ. Թերլեմեզյանին, Ս. Ունցյանին, Կ. Եզյանին, Ար. Հովհաննեսյանին, Կ. Կոստակյանին, Ժամկոչյան եղբայրներին, Մ. Իզմիրլյանին, Մակար կաթողիկոսին, Մ. Օրմանյանին, Հ. քի. Մկրտչյանին և մի շարք բարձրաստիճան հոգևորականներին, կրթական հիմնարկներին և իր հարազատներին: Խրիմյանը փոխադարձաբար համակեներ է ստացել մի շարք հշանավոր դեմքերից, այդ թվում Բ. Ղ. Ակիշանից, Բ. Ա. Բագրատունոց, Մկ. Սահամարյանից, Ալ. Շատուրյանից, Մ. Իզմիրլյանից, Սիմոն Մշեցոց և այլ անձերից ու հոգևորականներից:

Խրիմյանի արխիվում պահպանվել են մի քանի թանաստեղծություններ՝ նվիրված Բ. Ղ. Ակիշանի հիշատակին, իր հիշատակարանից հատվածներ, գրած հոդվածներ, խընդուրագործ՝ ուղղված պաշտոնական անձանց, արդ թվում ուսուաց նկարական նկարությունների պահպանին հոնդերում հանդիպում ենք:

Բացի իր արխիվից, թանգարանում գտնվող մի շարք գրողների և մտավորականների արխիվային ֆոնդերում հանդիպում ենք

Խորիմյանի գրած ճամակակիցին, որոնցից կարելի է հիշատակել Էջմիածնի Գևորգյան և Մովկայի Լազարյան ճամարանի տեսուն Կ. Կոտուարյանին, բանասեր-արվեստաբան Գ. Հայրենին, բանասեր-բանահանակաք Ս. Հայկունին, Ղ. Աղայանին, խմբագիր-հրատապարակիչ Գ. Ք. Աղայանին, Գր. Արծրունին, Վ. Երիցլամբեն, Ար. Հովհաննեսին, Հ. Խնձորոսյանին, Բ. Խաչատրյանին, Ա. Երիցլամբեն, Ար. Հովհաննեսին, Հ. Ենթիանանին և որդիշերին հոգածները:

Խորիմյան Հայրիկը սերտ ճամակագրական և կապերի մեջ է եղել իր մեծամակրագոյն աշխատակից, բանասեր-բանահանակաք գիտնական Գ. Մրգանձորան եպիսկոպոսի հետ, որին հոգած ճամակակիցին թիվը հասնում է 200-ի, իսկ ստացածները՝ շորոշ 60-ի: Այդ ճամակագրությունը տեղի է ունեցել անցյալ դարի 60—80-ական թվականներին՝ գրված Վանից, Պոլսից, Կարինից, Մշո Գլակա և Կարապետի վանքից և այլ տեղերից, որոնք շոշափում են իր ժամանակին հայ կրթությունի խնդիրները: Խորիմյանի և Մրկանձորայանի ճամակագրության ուսումնամիջությունն ու հրապարակումը մեծապես օգտակար կիրառ էր կու մեծ հայրենանվեր երախտավորների կյանքի ու գործունեության համար, որոնք առանց մենացորդի իրենց կյանքը նվիրեցին հայ ժողովրդի բարօրության և մշակութիվ զարգացման գործին:

Մրգանձորյանի արխիվում պահպանվել են գանձագան հնատերի արձանագրություններ, հաշվառվություններ, որոնք վերաբերում են Խորիմյան Հայրիկի և Գ. Մրգանձորյանի Մշո Գլակա և Կարապետի վանքում աշխատելու ժամանակաշրջանին:

Մեծ, լայն ու բազմազան է եղել Խորիմյան կաթողիկոսի գործունեության շառավիղը, հետևաբար շատ հարուստ՝ նաև երա ճամակագրական կազմ բազմաթիվ ճաշանակոր դեմքերի, պաշտոնական հիմնարկ-կազմակերպությունների հետ:

Դժբախտաբար քիչ բանակրությամբ են պահպանվել այդպիսիները. միայն թանգարանում եղածը շորոշ 600-ի է հասնում, որի հրապարակումը կրացանայտի իր ժամանակի մեծագոյն հայրենաներներից մեկի, իր ժողովրդի տառապանքով ապրող ու տպաշտող Հայրիկի նվիրվածությունն ու սերն իր հոտի նկատմամբ:

«Մշակ» թերթի խմբագիր, հրապարակագիր Հ. Առաքելյանը, որին անձամբ ծանոթ է եղել Խորիմյանը, մեծ համակրանք ու սեր է տածել Խորիմյան Հայրիկի անձի և գործի նկատմամբ: Նա ոչ միայն մասնակցել է նրա ընտրության և օճնան հանդիսավոր արարողություններին, այլև եղել է Խորիմյանի առաջին կենսագիրներից մեկը, որի արխիվում պահվել է նրա ընդարձակ կենսագրությունը,

մասնակությունից մինչև կաթողիկոսություն և մասն ներառյալ նաև գրական գործունեությունը՝ գրված բազմաթիվ վավերագրերի հիմնան վրա, որը նոյնական արժանի է ստանձնին հրատարակության, որպես ամբողջական ավարտում գործ, որի հիմնան վրա հիշությամբ կարելի է կազմել նաև Հայրիկի կյանքի տարեգրությունը:

Խորիմյան Հայրիկի բազմաթիվ ճամակակիցներից ուղարկության ենք Անդրեաս Մազարիչ Փանոս Թերեւմացյանին (1865—1941) հոդած 1901 թ. համակը, երբ նկարիչը տվյալում էր Փարիզի Ժուլիենի Գեղարվեստի ակադեմիայում: Մյուս ճամական ուղղված է Վ. Հյուզոյի թարգմանիչներից Վահագն Պատկանյանին (1832—1900 թթ.), երրորդը՝ մի ուս պետական պաշտոնյայի, կաթողիկոս ընտրվելու առթիվ նրասարեամբ Էջմիածնի գնալու մասին:

ԳՈՀԱՐ ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ

* * *

1901, մարտ 4, ի Տփխիս.

ՆԿԱՐԻՉ ՈՒՍՍԱՆՈՂ Պ. ՓԱՆՈՍ
ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆՍԿԻՑ

Դուք չեք գրած, բայց Պոլս լրագիրներն իմացա, որ դուք առաջին մրցանակն ստացած եք: Դուք այս ավետիս չեք տվել մեզ: Երկու պատճառ ունի այդ կամ այն է, որ հայարտացյալ չեք վասն հատաշահմանության և կամ այն է, որ իրամանակությամբ ծածկած եք, որպեսզի ավելի տարիներ դեգերեք ի Փիրազ: Ձեր վերջի համակով խնդրած եք, որ դեռ երկու տարի ևս մնաք, պահենք մինչև Հայրիկ մեռնի: Դուք չգիտե՞ք որ ես ծերացած եմ և իմ ամենամեծ մտադրությունն այն է, որ Մայր Աթոռի տաճար նկարներով զարդարես, չեմ գիտեր դուք սուրբ գործ պատկերներով պարապան՝ եք, որ ինձ համար և հայոց տաճարներուն համար այն է միայն պիտու և ոչ այլ և այլ ճյուղեր: Գրած եք թե ծառկենակարության և նետուն եմ, այդ շատ ավելորդ է հայոց դաշտեր կենդանի ծաղիկներ ունին: Դուք միայն և միայն պետք է հետևիք սուրբ գործ պատկերներուն:

Բնիկ տրապահունցի Ֆեթվաճյան պատկերահան որ քանի տարիներում Խոսհիա, Հոռոմ սորված է, այժմ ի Տփխիս կգտնվի և որ բավական բոշակ հանած է Ռուսաստանում: Նա ինձ խոսք տված է, որ մայիսի վերջ այսին գա սուրբ Էջմիածն: Ուստի այժմեն ձեզ իմաց կոտսամ, վականցին անպատճան պիտի վերաբանաք, որպեսզի ի միասին աշխատիք: Դուք գրած եք Ռուսա-

տան չեմ կարող դառնալ և այն: Այդ շատ անհիմն պատճառանք է, պետք է գիտնաք, որ ես նախատեսած եմ այդ պարագային և դրա հետաք մտածեր եմ զձեզ պահպանել այնպիսի պատմով միջավայրում, որ դուք զորությամբ անկանած լինիք: Դուք միայն երեք ամիս պիտի կենաք, ամունեան զձեզ դարձյալ Եվրոպա պիտի դրեմ, բայց անգամ հոտպահ, պիտ գնաք ի Հռոմ, որ ավելի գերազանց են ս. գրոց պատկերներ և ավելի Ռաֆայելի իշխանական օրինակներ Վատիկանի պալատում, զոր տեսած եմ աշբով:

Ուստի այլևս մի աշխատիք առարկություններ բերել հասաց, զորս չեմ կարող ընկունել: Ցավայի է, մի քանի ուսանողներ Եվրոպա դրկվեցան, ստանակ և ապերախտ գտնվելով, այնպես վարվեցան ինչպես իրենց կամքն էր: Եվ ես <ստիպվեցա> այլևս չքարերակել այնպիսիներուն: Եվ կատարյալ վատահոյցուն ունիմ ձեր վրա, ազնվարար վարկած եք մինչև այժմ և պետք է մինչև վերջ այնպես վարվեք: Ծերացած հայրին որո օրեր համբած են, նա ցանկանում է ձեր պատող տեսնալ:

Ուստի պարտավոր եք լսել Հայրիկին և մայիսի վերջին վերադառնաք ստ մեզ: Պետք է համապես հաստներ մեզ, որպեսզի ձեզ ճամբրո ծախս տրվի: Եվ արդեն լսած եք Աստվածաշունչ պիտի տպագրվի: Սորա համար պիտի ապապեմ մեզ ս. գրոց ընտրելագոյն պատկերներ բերեք փոքրիկ չափով եղածները, այն հոչակալիր պատկերանաներուն, որոնք հոչակ ունին աշխարհին վերա:

Սղոթարար ձեզ,
ՀԱՅՐԻԿ

* * *

<1861—1864>

ԽՐԻՍՏԱՆ

ԱՌ ԹԱՐԳՄԱՆ ՀՅՈՒԿՈՅԻ ՍՐՏԱՎԻՇՏ
ՀԱՐԱՀԱՆԱՑ

Հյուկոյի վշտահակ պատկերը հայեցի ճարտարարվեաս գրչով ի նկատ հանելով կղենու ի տեսարան հայ ծողովորդին, զուգակշռելով թե Խրիմյանն ևս նոյն նմանավիշու աղետներուն բաժանորդ եղած է: Բայց ո՞վ ես ես, ո՞վ է Հյուկոն. մի համեմատիք, նորա անոն տարբեր, իմ անոն տարբեր. նորա հայրենիք մեծ Ֆրանսան է, և իմ փոքրիկ Հայատան. նա ազատության ծնունդ, ես սորության. նա քաղաքական աշխարհին ազատության զինվոր, ես Ավետարանին խոնարհ պաշտոնյա, նա հանճարով ծով է. ես անձուն լճակ մի եմ. նորա վիշտերը յուր համար արկած են. այլ իմ վիշտերս պար-

տիք են և այն. այսպես մեր վիճակ ու կյանքը բոլորովին զանազան է:

Բայց համաշխարհային ընկերության մեջ զինվորակից եմք իրարու երես նորա դրոշակ լոյս հազարություն կկրն, ես էլ այդ դրոշակին սիրահար եմ: Մեծն Հյուկոն տիեզերքին բանաստեղծն է. նորա բարձրաթոփից ոգ-փուլն առաջ երկնից անհունություն և երկրին ընդարձակ տիրություն իրեն ասպարեզ կը բացի, որոց վերա կշրջի և կտիրեն այդ ազատ համեմարը ու կեան հիացյալ, այլ ես իմ փոքրիկ աշխարհին, փոքրիկ ժողովուրդին փոքրիկ աշուղն եմ. իմ երկերուս ասպարեզը հայրենաց հին ու նոր ամերակներն են ուրոց վերա մերը ծամով մերթ լույսայն կողման անմիտիք: Հյուկոն երշանիկ է, նորա վեմ ճակատին վերա Ֆրանսապի ազատության աստ կիայլի պայծառ, իսկ իմ գլուխ և ճակատ ստույրամած է և ծեռքին մեջ կը-շոշափեմ Հայատանի խավարը: Իմ հայրենաց որդիկ զիս Արծիվ ասացին. եւ բարձրեն ի վերասաւ կտեսնամ հայրենաց ցիրուց բեկորները ուր խավարը կտիրապետէ, ո՞ն, ո՞չափ դժմարին է մոթին դեմ կումիլ. լուսին ճառագայթով զանի փարաւել. լուսին զեր փոքրիկ նշով մի տարածելու պաշտոնն ատանձնած եմ. այս է իմ կոչումն. լուս կաղաղակեմ միշտ. զի գիտեն թե լուսն է միայն փրկություն. բայց ամենայն որ տարապայման հուս կակնկալէ հինեն. լուսին գորությունը. մարդուս ապիկար կարողության հետ կշփորեն և իմ աղաղակ խոռվելով կիսովեն:

Անավասիկ այս աղաղակը. իմ դաստապարտությունս եղած է. և առ այս թե զանգաւորիմ թե վշտանամ, թե զայրանամ դարձյալ ինձ համար համբերել պարտիք է. Ավելացամին և Հյուկոյի խոսքերը ինձ սփոփանք կիամարիմ. ես լավ կհամկընամ նորա վշտագին մրմունչը. զի ոգին ոգվուն և սիրտ սրտին նետը գիտեն խոսիլ:

Ակետարանի պաշտոնյա. գլուխ կճճնիմ արուարության և ճշմարտության ճահատակ լինել. Ամետարանին սեր, ժողովուրդին սեր, զիս ի սպանել կվարե. սորա համար թշնամիներս կսիրեմ սրտով. թող նորա ատեն. ի մերջ սեր կիսադահարե:

Կասեն թե քոյդ Հյուկոն միապետության թշնամի է և միթե Խրիմյանը ինքնիշխանության դիմ զինող հակառակ չէ. ես ընդհանուրին և ժողովուրդին օգտակար օրենքը օլսուու մերա բարձրությամբ կիարգեմ. այլ հոնդառական ճշմարտությամբ վերահասույնենով, թերի օրենքը հավիտլան պատեն եմ ոգեք. վերաքննություն աղաղակեցի հաթունեն իշա. սահմանադրության սոր հայանձանութերը մատ դրին եռու ու մրտութին. խնդիրը շատ պարզ էր խառնակեցին,

ալլարանեցին, անշափառ զրարանեցին, ընդկայր խունցան ու դատեցին թե Խրիմյանը ասհմանադրությունը չի վերաբնմէր, այլ խպան կեղծանե և աղև:

Տար իմ այս նվազ ձայն Հյուկոյին ով թարգման և ասա. ես Պիենվըն եայիսկուպու շեն. այլ նորս աշակերտակիցն եմ. շատ էր ինձ թե յոր նկարած լուսափառ պատկերին սովոր լինեմ. միայն կարարտիմ սրտի գորով ունիմ.

Նորա չափ ես էլ հայ ժամ Վաղժանեներ հոգացի, և ալճափ, որ ես էլ մի կարոտ ժամ Վաղժան դարձա:

Սաս նաև Հյուկոյին ես նորա մեն մի պարբերական հասածանաց արձագանք պիտի տամ, զուգակշռելով թե ես այլ մի վշտակար ոգի եմ:

<ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ>

* * *

ՎՍԵՄ. ՏԵՐ.

Մեծին Ռուսի պ. հյուպատոս և Երուսաղեմի այցելություն անելով մեզ, ծանուց Ձեր Վահանությանց ավետառու հեռազիրն, թե Տաճկաց բարեգործ Սուլթան վերջապես բարեհանձեր է արձակել զմեզ յոր հապատակութենեն. և այս անշուշտ Ձեր երկայնամիտ իմաստության շնորհիվն է, որ կարի շատ

տրեեցապ այս դժվարակնմիտ խնդիրն կարգադրել:

Պ. Հյուպատոս ծանուց նաև թե մեր Թրիեստի ճամբարով պիտի ողլորիմք, առ այս եւ ոչինչ դժկանություն չունիմ, քանի որ Պոլս արդյուն ուղևորելով իբրև հողմակար մի կարի անձն քափել ծարսկած քանի մը կարի անձնը քափել ծարսկած քանի մը ցամքած ժողովությին վերա, և որպես հովիկ այցելություն անել իմ սեպանական հոտին և միիրարել զիրենք իրենց վշտակության մեջ:

Եթե առանց այս հվիրական պարտը կատարելու անցենիս, ո՞չ միայն Քրիստոնեական ազատության և պաշտաման հվասարությունն է, այլ եւ կկարծեմ նաև որ մեծին Ռուսի կարող և ինքնազդը իշխանության պատիլ չի ներել որ յոր հապատակ Հայոց Հայրապետ անշոր և անփառունակ ողլորի մը պես անցենի Վոսփորենի:

Ուրեմն ինձ համար լավ ևս է Ձեր իմաստու և նորինությունն, որ հեռատեսությանք զիշումն արած է: Առ որ իմ խորին շնորհակալություննիս հայտնելով կաղոյթեալ վասն ձեր անձին կենաց և կմնամ միշտ երախտապարտ:

ՄԿՐՏԻՉ ԱՐԳԵՊԻՍԿՈՊՈՍ ԽՐԻՄՅԱՆ
1892, մայիս 28
ԹԵՐՊԱՍԴԵԼ

